AUA TURPANJIAN COLLEGE of HEALTH SCIENCES

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ)

«Ձեռներեցներ առողջապահության ոլորտում» (ՁԱՈ) ծրագիր

ՀԱՀ ՁԱՈ ծրագրի նպատակն է բարձրացնել որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիությունը մարզային փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում՝ օգնելով ոլորտի ձեռներեցներին հիմնել կամ ընդլայնել իրենց մասնավոր առողջապահական ծառայությունները՝ այդպիսով լրացնելով որակյալ ծառայությունների բացը մարզային համայնքներում:

ՁԱՈ ծրագրի շահառուները հնարավորություն ունեն օգտվել ծրագրի հետևյալ բաղադրիչներից:

- **Ֆինանսական աջակցություն ցածր տոկոսադրույքով (5%) վարկի տեսքով:**
  - Ֆինանսական օժանդակություն ունեցող շահառուները կարող են վարկի դիմել երկրորդ անգամ՝ առաջին վարկի 80%-ը մարելու դեպքում:
  - Ֆինանսական օժանդակություն չունեցող շահառուները կարող են դիմել վարկի՝ հետագայում նոր բիզնես գաղափարով:
- **Մասնագիտական խորհրդատվություն:**
  - ՁԱՈ ծրագիրը տրամադրում է անվճար խորհրդատվություն մասնավոր ծառայության տարբեր գործառույթներում (օրինակ՝ մարքեթինգ, ֆինանսներ, բանկային ծառայություններ, հաշվապահություն, հարկային համակարգ, բուժօգնության որակի ապահովում/բարելավում և այլն):
- **Սփյուռքում ապրող և աշխատող բժիշկների հետ համագործակցություն:**
  - ՁԱՈ ծրագրի ատամնաբուժական, ընտանեկան բժշկի/թերապևտիկ և սրտաբանական ծառայություններ մատուցող շահառուները հնարավորություն ունեն համագործակցել սփյուռքում ապրող և աշխատող մենթորների հետ՝ փորձի փոխանակման, կլինիկական դեպքերի քննարկման, մասնագիտական թեմաների քննարկման և այլ ձևաչափերով:
- **Աջակցություն շարունակական մասնագիտական զարգացմանը:**
  - ՀԱՀ ՁԱՈ շահառուները հնարավորություն ունեն մասնակցել ՀԱՀ Բաց կրթության բաժնի առաջարկած դասընթացներին, եթե դրանք նպաստում են մասնավոր գործունեության զարգացմանը: Այս պարագայում ՁԱՈ ծրագիրը փոխհատուցում է դասընթացի վճարի 80%-ը:
  - ՁԱՈ ծրագիրը նաև առաջարկում է տարբեր ոլորտներում (օր.՝ հաշվապահություն, կանխարգելիչ ատամնաբուժություն) անվճար դասընթացներ:

Վերջին թարմացումը՝ 30.11.2023

Կապ՝ eih.trdp@aua.am; 060 612 591 (ծրագրի պաշտոնական կոնտակտային տվյալներ)
aatanyan@aua.am; 055 050 164 (Աստղիկ Աթանյան, ծրագրի համակարգող)
hlylozian@aua.am; 055 050 293 (Հրաչյա Լիլոզյան, մարզային գործունեությունը համակարգող)